## 2. Սեռ։

Արական, իգական ունենալ արաբացի բառերու միայն յատուկ է։
Ամէն իգի անուն է բնէ-էֆտան է։
Իսկ սովորութեամբ իգականներէն, ոմանք՝ կանոնով, ոմանք՝ լսելով միայն միաք կ'առնուին, եւ ըստ այսմ՝ ֆըէ... եւ ...՝ կը զանազանին։

Օսմանցիք Նէֆս բառը եւ Բէ իգական յանգով բառերը միայն եւ նշանագրաց անունն իգական կը հաշուեն իրենց լեզուին մէջ, զորօր. Նէֆսի էմմարէ, ցանկութիւն. Նէ'մէթի ճելիլէ, մեծ շնորհք. Վավը մէմտուտէ, երկար վաւ. Էլիֆպայի 'օսմանիյէ, օսմանեան այբուբենք։

Պարսկերէն բառերը միշտ արական են։

## 3. Հոլովում եւ Հոլով։

Օսմանեան լեզուին հոլովումը՝ մի միայն է. իսկ հոլովները՝ չորս են. հոլովակերտ գրերն եզակի եւ յոգնակի մէջ նոյն են։ Բառի մը բնական ձեւը՝ ուղղական է, զորօր. Էվ. Հայցականի հոլովակերտն Իի գիրն (= ի, ը) է, զորօր. Էվի, Էվլէրի. Հէ գիրը (= է, ա) տրականինն է, զորօր. Էվէ, Էվլէրէ. իսկ սեռականինը Նունը-Քէֆ (= ին, ըն) է, զորօր. Էվին, Էվլէրին։

Ամէն կերպ բառ թէ պարսիկ թէ արաբացի հաւասարապէս անխտիր եւ միակերպ այսպէս տաճկերէն ձեւով միայն կը հոլովին. — պարսկական եւ արաբական բառերը պարսկերէն եւ արաբերէն ձեւով հոլովել օսմանեան լեզուի ամենեւին օտար է։

Հէ գրով կամ Ուղղագրական նշանագրով յանգող բառերուն հայցականն ու տրականը՝ հոլովակերտ մասնկէն յառաջ Յէ մ'ալ կ'առնուն. իսկ սեռականը Նուն եկամուտ կամ յաւելուածոյ գրով, զորօր. Օտայընըն։

Դարձեալ բառի մը վերջի անձայն Քէֆը հոլովման մէջ՝ եթէ ձայնաւորի կամ հօրէյի առնու, Ղայնի կը կը փոխուի, զորօր. Այաք, Այաղը եւ այլն։ Նոյնպէս Թէֆին ալ Տալի, զորօր. Քէտէ, Քէտիյի եւ այլն։

## 4. Իզաֆէթ։

Բառի մը ուրիշ բառի հետ միաւորութիւնն՝ որ Իզաֆէթ կը կոչուի, անոնց իրարմէ քերականական կախումը կը ցուցընէ կամ պէս պէս աղերսին նշանակ է. գլխաւորը (զորօր. յատկացեալը՝ նկատմամբ յատկացուցչին, գոյականը՝ նկատմամբ ածականին,) Մուզաֆ, երկրորդականը՝ Մուզաֆ-իլէյհ կը կոչուի։ Պարսկերէն ձեւով՝ որ Իզաֆէթին յաճախեալ կերպն է, Քէսրէով մը (= ի, ը) Մուզաֆին յառաջադասութեամբն է. Հակառակ տաճկերէնի կարգին՝ ուր յետադաս է միշտ եւ Մուզաֆ-իլէյհ նախադաս։ Չորս տեսակի գլխաւորաբար կրնանք բաժնել, որոնք դարձեալ իրենց ստորաբաժանմունքն ունին պէս պէս առմամբ կամ այլեւայլ նշանակութեամբ ա. Էրքա ֆայական. բ. Աճակ ֆայական. գ. Խնտրատա Խնտիր. դ. Բայ(ական) անուն Բայի։

### Ա. Երկու գոյական։

1. Իբրեւ ՅԱՏԿԱՑՈՒՑԻՉ ՅԱՏԿԱՑԵԱԼ (Իզաֆէթի Լամիյէ), զորօր. Տէրախթը Գուլ, ծառ վարդի. Դաւուդ Տէհլէթի, թշնամի տէրութեան։

2. Իբրեւ ԲԱՑԱՑԱՅՏԻՉ ԲԱՑԱՑԱՅՏԵԱԼ (Իզաֆէթի Պէյանիյէ), զորօր. Տէրախթը Տէրզ, ուռի ծառ։